ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ
Տ. ԵԶՆԻԿ ԵՎ Տ. ՆԱՎԱՍԱՐԴ ՍՐԲԱԶԱՆՆԵՐԻՆ

Հունիսի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիսավորապես տոնախմբվեց Հոգեգալստյան տոնը: Պատարագիչն էր Տ. Եփրեմ աբեղա Սարգիսյանը:

Տոնը հատկանշվեց նաև մեկ այլ ուրախալի իրադարձությամբ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական օրհնությամբ արքության պատիվ շնորհվեց Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի տնօրեն Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանին և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ եպիսկոպոս Կճոյանին՝ ի գնահատություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու անդաստանում իրենց անմնացորդ ծառայության և տարիների վաստակի:

Թող Տերը Իր հանապազ օրհնությամբ օգնական և աջակից լինի Գերաշնորհ Եզնիկ և Նավասարդ արքեպիսկոպոսներին, պարգևի քաջառողջ կյանքի երկար տարիներ և հոգու անսպառ կորով՝ հարանորոգ հաջողություններով պսակազարդելով իրենց ծառայությունը՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ